Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Լրամշակված

Պ-311-08.10.2019-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-334 օրենքի (այսուհետ Օրենք)

1.11-րդ հոդվածի 7-րդ մասի «ժդ» կետում կարգի և» բառերը հանել.

Հոդված 2. Հոդված 15.1. Շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր և այլ վճարների վճարման կարգը

1. Սույն օրենքով սահմանված պարտադիր վճարները, և այլ վճարները շինություններից

սեփականատերերի կողմից կատարվում են անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բանկային հաշվի վարման կարգը սահմանում

է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ից:

Պ-311-08.10.2019-ՏՏԳԲ-011/1

Երկրորդ ընթերցում

լրամշակված

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-334 օրենքի (այսուհետ Օրենք)

1. 11-րդ հոդվածի 7-րդ մասի «ժդ» կետում կարգի և» բառերը հանել.

~~**2. 11-րդ հոդվածի 7-րդ մասի «ժե» կետում ,վճարման կարգի» բառերը հանել.**~~

Հոդված 2. Հոդված 15.1. Շինությունների սեփականատերերից գանձվող պարտադիր և այլ վճարների վճարման կարգը

1. Սույն օրենքով սահմանված պարտադիր վճարները, և այլ վճարները շինությունների սեփականատերերի կողմից կատարվում են անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բանկային հաշվի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

~~**Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2019 թվականի դեկտեմբերի 1-ից:**~~

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

Պ-311-08.10.2019-ՏՏԳԲ-011/1 «ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության, փոփոխության(լրացման) հեղինակը	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկությունը փոփոխությունը(լրացումը)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի(հիմնական զեկուցողի եզրակացությունը)**	**Առաջակությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ Հանձնաժողովի որոշումը**
1	**2**	**3**	**4**	**5**	**6**
	ՀՀ կառավարություն	Նախագծի փաթեթի «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասը և 2-րդ հոդվածը հանել	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է
	ՀՀ կառավարություն	Նախագծի փաթեթի «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդված	Նախագծի «Հոդված 2. Օրենքը լրացնել նոր 15.1 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. **Հոդված 15.1. Շինությունների սեփական անատերերից գանձվող պարտադիր և այլ վճարների վճարման կարգը** 1. Սույն օրենքով սահմանված պարտադիր վճարները, և այլ վճարները շինությունների սեփականատերերի կողմից կատարվում են անկանխիկ եղանակով՝ յուրաքանչյուր բազմաբնակարան շենքի համար	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է

			առանձին, բազմաբնակարան շենքի կառավարման մարմնի անվամբ այդ նպատակով բացված բանկային հաշվին փոխանցելու եղանակով: 2.Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված բանկային հաշվի վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:		
	Պատգամավոր Վաղարշակ Հակոբյան 25.12.2019	«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» նախագծի նախագծի 3-րդ հոդված	Օրենքի նախագծի 3-րդ հոդվածները շարադրել նոր բովանդակությամբ **Հոդված 3.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 1-ից:	Ընդունվել է կատարվել է համապատասխան փոփոխություն	Ընդունվել է